ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏՆՕՐԵՆ

ք. Երևան 0051 Կոմիտասի պող., 49/4 Հեռ.՝ **(37410) 23-71-34** Էլ.փոստ՝ info@nih,am

№ 01-127/6

06.02.2023թ.

<<Լիոն ՍՍ >> ՍՊԸ
Տնօրեն Ջ. Պողոսյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Լիոն ՍՍ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի հունվարի 3-ին կնքվել է «Շենքի մաքրման ծառայությունների» մատուցման «ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԾՁԲ-23/8» ծածկագրով պայմանագիր և համաձայնագիր:

Պայմանագրի 1.1 կետով՝ Կատարողը ստանձնում է շենքի մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված ծառայությունը մատուցելու ժամկետները, և չի մատուցել կամ անպատշաճ որակի ծառայություն է մատուցել: Բազմիցս պատասխանատու ստորաբաժանումը կազմակերպությանը հայտնել է դժգոհությունը մատուցված ծառայության վերաբերյալ: Թերությունների վերացման համար տրված ժամանակահատվածում ոչ մի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Համաձայն պայմանագրի 2.1.3 կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պատվիրատուն ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի լուծում է պայմանագիրը ամբողջությամբ՝ 9900000 ՀՀ դրամ գումարի չափով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի ա կետի համաձայն՝ անձը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է, եթե «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի որակավորման ապահովման գումարը):

Տվյալ դրույթը հաշվի առնելով, առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վճարել վերը նշված որակավորման և պայմանագրային ապահովումների գումարները՝ 1507350 ՀՀ դրամ և 1004900 ՀՀ դրամ համապատասխանաբար ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Հայէկոնոմբանկի 163058101441 հաշվեհամարին:

Հակառակ դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԶԱՐՉՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ԱՆ ԱԱԻ
Գնումների համակարգող
հեռ. 23-53-50